«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան»
Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Սամվել Նիկոյան

«03» Հունվար 2016թ.

ԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի */այսուհետ՝ նաև օրենք/* հիման վրա սույն կարգը */այսուհետ՝ Կարգ/* սահմանում է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի */այսուհետ՝ նաև հիմնադրամ/* կողմից սեփական գործունեության իրականացման համար անհրաժեշտ գնումների կատարման հիմնական սկզբունքներն ու գործընթացը: Սույն կարգը չի տարածվում հիմնադրամի գործունեության հետ ուղղակի կապ չունեցող աշխատանքների, ծառայությունների և ապրանքների գնումների վրա: Գնումների կարգը համապարփակ նկարագրում է գնումների գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը: «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամն իր կողմից հաստատված սույն կարգը հրապարակում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազոր մարմնի կողմից հրատարակվող տեղեկագրում (գնումների էլեկտրոնային տեղեկատու):

ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 1. Կարգում օգտագործվող հիմնական հասկացությունները

Կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

Պատվիրատու «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ Երևանի կրթահամալիր, պատվիրատուի ղեկավարի կողմից նախատեսվելու դեպքում՝ նաև Գյումրու, Վանաձորի և Կապանի մասնաճյուղերը

Գնումներ	Պատվիրատուի կողմից հանրակրթական, միջին, նախնական մասնագիտական (արհեստագործական), բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, ինչպես նաև լրացուցիչ կրթության կազմակերպման, օտարերկրյա դիմորդների նախապատրաստական և բոլոր աստիճանների կրթության կազմակերպման, գիտամանկավարժական կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման, գիտահետազոտական, գիտական, նախագծային, տեխնիկական հսկողության, արտադրական, շինարարական աշխատանքների կատարման և իրացման, փորձագիտական գործունեության կազմակերպման, խորհրդատվական ծառայությունների մատուցման. ուսումնագիտաարտադրական գործունեության ծավալման, հրատարակչական, տպագրական գործունեության ծավալման և արտադրանքի իրացման, սովորողների և աշխատողների սննդի կազմակերպման, համակարգչային տեղեկատվական ծառայությունների մատուցման և համակարգչային ծրագրերի ու լեզուների ուսուցման կազմակերպման, սովորողների և աշխատողների կենցաղի ու հանգստի կազմակերպման իրականացման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում
Բնութագրեր	Գնման առարկան բնորոշող տնտեսական, որակական և տեխնիկական ցուցանիշներ
Գնումների բազային միավոր	Հայաստանի Հանրապետության ազգային արժույթով արտահայտված մեկ միլիոն դրամ
Հրավեր	Գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով պատվիրատուի կողմից մասնակցին տրամադրվող փաստաթղթերի փաթեթ
Հայտ	Գնմանը մասնակցելու նպատակով մասնակցի կողմից պատվիրատուին հրավերի հիման վրա ներկայացվող տվյալների և փաստաթղթերի փաթեթ՝ առաջարկ
Մասնակից	Գնումների գործընթացին մասնակցելու և պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով հայտ ներկայացրած անձ
Ընտրված մասնակից	Գնման ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից, որին պատվիրատուն առաջարկում է կնքել պայմանագիր
Հայտի Ապահովում	Կարգով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց

Պայմանագիր	Կարգով գնումներ կատարելու նպատակով պատվիրատուի և ընտրված մասնակցի միջև գնում կատարելու նպատակով կնքվող գրավոր գործարք
Պայմանագրի կատարման ապահովում	Ընտրված մասնակցի կողմից պատվիրատուին տրամադրվող ապահովում՝ ի հավաստումն կնքվելիք պայմանագրով ստանձվող պարտավորությունների կատարման
Ապրանքներ	Պատվիրատուի կողմից հանրակրթական, միջին, նախնական մասնագիտական (արհեստագործական), բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, ինչպես նաև լրացուցիչ կրթության կազմակերպման, սովորողների և աշխատողների սննդի կազմակերպման, սովորողների և աշխատողների կենցաղի ու հանգստի կազմակերպման իրականացման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և ապրանքանյութական պաշարներ
Աշխատանքներ և ծառայություններ	Պատվիրատուի կողմից հանրակրթական, միջին, նախնական մասնագիտական (արհեստագործական), բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, ինչպես նաև լրացուցիչ կրթության կազմակերպման, օտարերկրյա դիմորդների նախապատրաստական և բոլոր աստիճանների կրթության կազմակերպման, գիտամանկավարժական կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման, գիտահետազոտական, գիտական, նախագծային, տեխնիկական հսկողության, արտադրական, շինարարական աշխատանքների կատարման և իրացման, փորձագիտական գործունեության կազմակերպման, խորհրդատվական ծառայությունների մատուցման, ուսումնագիտաարտադրական գործունեության ծավալման, հրատարակչական, տպագրական ծավալման և արտադրանքի իրացման, սովորողների և աշխատողների սննդի կազմակերպման, համակարգչային տեղեկատվական ծառայությունների մատուցման և համակարգչային ծրագրերի ու լեզուների ուսուցման կազմակերպման, սովորողների և աշխատողների կենցաղի ու հանգստի կազմակերպման իրականացման համար անհրաժեշտ այլ անձանց կողմից կատարման ենթակա գործողություններ կամ իրականացման ենթակա գործունեություն
Հրատապ գնումներ	Գնումներ, որոնք հնարավոր չէր նախապես կանխատեսել և որոնց իրականացման հրատապությամբ պայմանավորված ժամանակահատվածը թույլ չի տալիս դրանք իրականացնել գնանշումների հարցման կամ մրցույթի միջոցով, կամ հիմնադրամը պայմանագրային պարտավորություն է ստանձնում, որով ունի ժամանակային սահմանափակում և որի ընթացքում ինքն է հանդիսանում կատարող համապատասխան փոխհատուցման դիմաց ապրանք մատակարարելու և /կամ/ ծառայություն մատուցելու համար

Գլուխ 2. Գնումներին մասնակցելու հավասարությունը

Պատվիրատուն պարտավոր է միանման վերաբերմունք ցուցաբերել գնումների գործընթացին մասնակցելու ցանկություն ունեցող բոլոր անձանց նկատմամբ, ինչպես նաև բացառել խտրականությունը և որակավորման այնպիսի չափանիշների ու բնութագրերի, գնումների այնպիսի քանակների ու պատվերի կատարման այնպիսի ժամկետների սահմանումը, որոնք կրում են խտրական բնույթ կամ ներառում Կարգով չնախատեսված չափանիշներ և կարող են անհիմն խոչընդոտել կամ սահմանափակել ցանկացած անձի՝ գնումներին մասնակցելու իրավունքը:

Գլուխ 3. Գնումներին մասնակցելու իրավունքը և մասնակիցներին առաջադրվող որակավորման չափանիշները

3.1. Գնանշումների հարցմանը կամ մրցույթին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

ա) որոնք գտնվում են լուծարման գործընթացում, սնանկ են ճանաչվել կամ որոնց գույքի վրա արգելանք է դրված,

բ) որոնք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չունեն տվյալ տեսակի գործունեություն իրականացնելու իրավունք (լիցենզիա, թույլտվություն և այլն), կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթարկվել են այնպիսի պատասխանատվության, որի հետևանքով նրանց արգելվել է հայտ ներկայացնելու պահին իրականացնել տվյալ տեսակի գործունեություն,

գ) որոնք հայտ ներկայացնելու պահին ունեն ժամկետանց պարտքեր՝ հարկային և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարների գծով,

դ) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

ե) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանված կամ մարված է:

3.2. Գնանշումների հարցման միջոցով կամ մրցույթով գնումներ իրականացնելու դեպքում, այդ թվում՝ հրատապության հիմքով գնումների կատարման դեպքում, պատվիրատուն մասնակիցներին ներկայացնում է որակավորման չափանիշներ: Մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները վերաբերվում են..

ա) ֆինանսական միջոցներին,

բ) համապատասխան տեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների առկայությանը,

գ) պայմանագրով նախատեսված գործունեության՝ մասնագիտական գործունեության համապատասխանությանը,

դ) մասնագիտական փորձառությանը:

3.3. Մասնակիցների՝ Կարգի 3.1. կետով նախատեսված «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե մասնակիցը հայտով ներկայացրել է իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին.

2) բացի հայտարարությունից, նախորդ ենթակետի պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

3.4. Մասնակիցների՝ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ պայմանագրով նախատեսված գործունեությանը իր մասնագիտական գործունեության համապատասխանության մասին,

2) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

3.5. Մասնակիցների՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

3.6. Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

3.7. Մասնակիցների՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա մասնակիցը ներկայացնում է

այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

3.8. Մասնակիցների՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին

2) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

3.9. Մասնակիցների «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. մասնակիցը ներկայացնում է պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավո-րումը	աշխատանքային փորձը		գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները
		ժամանա-կահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

3.10. Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

3.11. Մասնակիցը գնումներին մասնակցության իր իրավունքը և որակավորման չափանիշները հավաստելու համար պարտավոր է պատվիրատուին ներկայացնել հրավերում նշված փաստաթղթերի բնօրինակները՝ բացառությամբ երրորդ անձի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը: Մասնակիցը պատասխանատվություն է կրում իր կողմից տրամադրված փաստաթղթերի տվյալների հավաստիության համար:

3.12. Տեխնիկական բնութագրերը պատվիրատուի համապատասխան պահանջի առկայության դեպքում պետք է ներառեն գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների որակի, արդյունքների, ստանդարտների, անվտանգության, չափերի, պայմանական նշանների, փաթեթավորման, բեռնավորման և բեռնաթափման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ պահանջների հստակ նկարագրությունը՝ հնարավորինս բացառելով այլընտրանքային մեկնաբանությունները:

3.13. Տեխնիկական բնութագրերը պատվիրատուի համապատասխան պահանջի առկայության դեպքում պետք է հղումներ պարունակեն կոնկրետ առևտրային նշաններին, ֆիրմային անվանումներին, պատենտներին, էսքիզներին կամ մոդելներին, ծագման կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին:

Գլուխ 4. Գնումների գործընթացի կազմակերպումը

4.1. Յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝

1) գնումները համակարգողը.

2) պատասխանատու ստորաբաժանումը.

3) գնահատող հանձնաժողովը:

4.2. Պատվիրատուի ղեկավարը՝

1) սահմանում է՝

ա. գնումները համակարգող,

բ. պատասխանատու ստորաբաժանում,

գ. գնահատող հանձնաժողով, բացառությամբ մեկ աղբյուրից կատարվող գնումների դեպքում:

Եթե գնահատող հանձնաժողով չի ձևավորվում, ապա գնահատող հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը, մասնագիտական խումբ ձևավորված լինելու դեպքում՝ խումբը, իսկ հանձնաժողովի քարտուղարինը՝ գնումները համակարգողը:

4.3. Գնումները համակարգողը՝

1) պատասխանատու է պատվիրատուի՝ գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման համար.

2) իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները.

3) կազմում և պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում տվյալ գնման ընթացակարգի արձանագրությունը և պայմանագիրը,

4) եզրակացություններ է տրամադրում գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ,

5) ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը Կարգով սահմանված պայմաններին:

4.4. Պատասխանատու՝

1) ստորաբաժանումը՝

ա. կազմում և հաստատում է գնման հայտը,

բ. հետևում է պայմանագրի կողմի (կապալառու, մատակարար և այլն)՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացի նկատմամբ,

գ. ընդունում է պայմանագրի կատարման արդյունքը,

դ. ներկայացնում է այն անձանց (թեկնածուների) ցուցակը, որոնք առաջադրվում են գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով,

ե. անհրաժեշտության դեպքում առաջարկ է ներկայացնում գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,

զ. սահմանվում է պատվիրատուի ղեկավարի կողմից:

2) ստորաբաժանում կարող են սահմանվել պատվիրատուի՝

ա. համապատասխան ստորաբաժանումը,

բ. ձևավորած մասնագիտական խումբը, որի կազմում կարող են նաև ընդգրկվել այլ մարմինների կամ կազմակերպությունների ներկայացուցիչներ.

3) ստորաբաժանման լիազորությունները չեն կարող վերապահվել գնումները համակարգողին.

4) ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից: Ընդ որում, գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը չի կարող մասնակցել գնման հայտի նախագծմանը, եթե վերջինիս մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրած կամ բաժնեմաս ունեցող կազմակերպությունը կարող է հանդիսանալ տվյալ գնման գործընթացի հնարավոր մասնակից: Այդ կապակցությամբ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձն ստորագրում է նման հնարավորության բացակայության վերաբերյալ համապատասխան հայտարարություն:

4.5. Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է առնվազն երեք անդամից կազմված գնահատող հանձնաժողով, որը՝

1) հաստատում է հայտարարության և հրավերի տեքստերը.

2) փոփոխություններ է կատարում հրավերում.

3) պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ.

4) բացում և գնահատում է հայտերը.

5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին),

6) չկայացած է հայտարարում գնման ընթացակարգը,

7) փոփոխություններ է կատարում գնման հայտարարությունում:

4.6. Հանձնաժողովն ունի նախագահ և քարտուղար, որոնք նշանակվում են հանձնաժողովի կազմավորման մասին հրամանով: Քարտուղարը հանձնաժողովի անդամ չէ:

4.7. Քարտուղարը՝

1) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները.

2) ստանում և հաշվառում է հայտերը.

3) կազմում և հանձնաժողովին է ներկայացնում վերջինիս հաստատմանը ենթակա փաստաթղթերի նախագծերը.

4) տրամադրում է հրավեր.

5) կազմակերպում է գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանումների տրամադրումը.

6) պատասխանատվություն է կրում հանձնաժողովի գործունեության՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանության համար.

7) իրականացնում է իրեն վերապահված այլ լիազորություններ:

4.8. Հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտավոր են հանձնաժողովի ողջ գործունեության ընթացքում պահպանել անձնապես իրենց հայտնի դարձած՝ հայտերով ներկայացված տեղեկությունների գաղտնիությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.9. Գնահատող հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումն ընդունվում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

4.10. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ պայմանագիրը կնքվելու օրվան հաջորդող օրը գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Գլուխ 5. Գնումների պլանավորումը

5.1. Գնումների պլանը սահմանված կարգով հաստատում է պատվիրատուի ղեկավարը:

5.2. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում, գնումների սկզբնական պլանում չներառված լրացուցիչ գնում կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում: Գնումների պլանի փոփոխությունները և լրացումները կատարվում են գնումների պլանի հաստատման կարգով:

5.3. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

5.4. Կարգի 8.4 կետի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիրը կնքվում է գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից սկսած տասն աշխատանքային օրվա ընթացքում:

5.5. Պատվիրատուի ղեկավարը Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից ծախսերի նախահաշիվը հաստատելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է գնումների պլանը և հաստատելուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում գնումների պլանը սահմանված կարգով հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գլուխ 6. Գնումների նախապատրաստումը

6.1. Գնումների նախապատրաստման նպատակով գնումների պլանում ներառված գնման յուրաքանչյուր առարկայի համար գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում է՝

1) պատասխանատու ստորաբաժանում,

2) գնումները համակարգող:

6.2. Եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու հրամանով նախատեսված չէ ավելի կարճ ժամկետ, ապա գնումների պլանը հաստատվելու կամ փոփոխվելու օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը կամ գործարանային փաթեթավորումը, եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար.

բ. մասնակիցների որակավորման չափանիշները, այդ թվում՝

- «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, եթե Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ,
- շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակ, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության,

գ. ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար պահանջող լիցենզիաների ցանկը, եթե

կնքվելիք պայմանագրի կատարումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեություն,

դ. մեկ աղբյուրից և գնանշման հարցման միջոցով գնումներ կատարվելու դեպքում այն անձի կամ անձանց (հնարավոր մասնակից) տվյալները (անվանումը, գտնվելու վայրը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն), որոնց պետք է ուղարկվի տվյալ գնման հրավերը: Ընդ որում, նշված անձանց թիվը չի կարող պակաս լինել երեքից ինչպես գնանշումների հարցման, այնպես էլ հրատապության հիմքով մեկ աղբյուրից գնում կատարվելու դեպքում:

ե. գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը,

զ. ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ժամկետները, այդ թվում՝ վերջնաժամկետը.

2) գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը՝ ըստ հանձնաժողովի կազմում այդ անձանց ընդգրկման առաջնահերթության:

6.3. Գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.

2) ձեռք են բերվում ապրանքների լրացուցիչ քանակություններ, որոնք նախատեսված են մատակարարի կողմից նախապես մատակարարված սարքավորումները (կառուցվածքները) փոխարինելու կամ լրացնելու համար, և սկզբնական մատակարարի փոփոխությունը կպարտադրի պատվիրատուին ձեռք բերել այլ հատկանիշներ ունեցող ապրանքներ, ինչը շահագործման ու պահպանման առումով կառաջացնի անհամատեղելիություն կամ անհամաչափ տեխնիկական բարդություններ: Այս պայմանը կարող է կիրառվել միայն սկզբնական պայմանագրի կնքմանը հաջորդող երեք տարվա ընթացքում.

3) պատվիրատուն, որևէ անձից կատարելով աշխատանքների կամ ծառայությունների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն չնախատեսված հանգամանքներից ելնելով սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած աշխատանքների կամ ծառայությունների լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ՝

ա. լրացուցիչ աշխատանքների կամ ծառայությունների պայմանագիրը հնարավոր չէ տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից՝ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու, և

բ. դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի քսան տոկոսը: Միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ.

4) ապրանքները ձեռք են բերվում իր ձեռնարկատիրական գործունեությունը վերջնականորեն դադարեցնող կազմակերպությունից կամ անվճարունակության գործով լուծարողներից կամ կառավարիչներից, վարկատուների հետ պայմանավորվածության հիման վրա կամ նմանօրինակ ընթացակարգի միջոցով՝ պատվիրատուի համար առանձնակի նպաստավոր պայմաններով.

5) գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը:

6.4. Պատասխանատու ստորաբաժանումը գնման հայտը՝ հերթական համարակալումով, իր կողմից դրա հաստատվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը գրությամբ փոխանցում է գնումները համակարգողին:

6.5. Գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում գնահատում է գնման հայտի կազմման համապատասխանությունը Կարգով սահմանված պահանջներին: Եթե արձանագրվում է անհամապատասխանություն, ապա գնման հայտը վերադարձվում է պատասխանատու ստորաբաժանմանը, որն ուղղում և երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումները համակարգողին է ներկայացնում ճշտված գնման հայտը: Արձանագրված անհամապատասխանության հետ չհամաձայնելու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում գնման հայտը հետ է վերադարձնում գնումները համակարգողին, որն այն ստանալուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին: Զեկուցագիրն ստանալու օրը պատվիրատուի ղեկավարը՝

1) հանձնարարում է պատվիրատուի իրավաբանական ծառայությանը երկու աշխատանքային օրվա ընթացքում տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր.

2) իրավական եզրակացությունն ստանալուց հետո հանձնարարում է՝

ա. գնումները համակարգողին՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպել հիմք ընդունելով ներկայացված գնման հայտը, եթե իրավական եզրակացությամբ զեկուցագիրը համարվել է անհիմն, կամ՝

բ. պատասխանատու ստորաբաժանմանը, ըստ իրավական եզրակացության, վերանայել գնման հայտը:

6.6. Պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով Կարգի 6.5-րդ կետով նախատեսված գրավոր հանձնարարականը և գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը, որը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Գլուխ 7. Պայմանագրի կատարման արդյունքների ընդունումը

7.1. Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

7.2. Արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը տալիս է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ

մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար:

7.3. Կարգի 7.2. կետով նախատեսված գրավոր եզրակացության ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը: Ընդ որում՝

1) պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության՝ հաշվապահական ձևակերպման հիմքը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխանության մասին գրավոր եզրակացության հիման վրա պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից հաստատված արձանագրության առկայությունն է, իսկ մատակարարված ապրանքների պահեստ մուտքագրումը պահեստի պատասխանատուն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված արձանագրության պատճենի (ներառյալ գրավոր եզրակացության պատճենը) հիման վրա, որը վերջինիս տրամադրվում է դրա կազմման օրը.

2) պատասխանատու ստորաբաժանումն արձանագրության, ներառյալ գրավոր եզրակացության, իսկ ապրանքների դեպքում նաև պահեստ մուտքագրման օրդերի պատճեններն այն կազմելու օրը գրավոր տրամադրում է պատվիրատուի ֆինանսական ծառայությանը:

7.4 Շինարարական ծրագրերի գնման դեպքում կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) նախորդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև Կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

Գլուխ 8. Գնումների ֆինանսավորումը

8.1. Գնումների պլանները հաստատվում են ըստ գնման առարկայի, քանակի, ընդհանուր գնի, գնման ձևի: Դրանք հրապարակվում են տեղեկագրում, բացառությամբ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների պլանի:

8.2. Շինարարական աշխատանքների գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա: Առանց նախագծային փաստաթղթերի առկայության շինարարական աշխատանքների գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվել չեն կարող, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

8.3. Եթե գնման գինը գերազանցում է տվյալ ժամանակահատվածում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ապա, պայմանագիր կնքվելու դեպքում, տվյալ ժամանակահատվածին հաջորդող ժամանակահատվածում նախատեսվում են ֆինանսական միջոցներ գնման պայմանագրով սահմանված գնումն իրականացնելու կամ տվյալ գնումը ժամանակավորապես դադարեցնելու համար (եթե ժամանակավոր դադարեցումը պահանջում է ֆինանսական միջոցներ):

8.4. Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն կետի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել: Սույն կետը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

8.5. Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական

հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

8.6. Մասնակցի հետ կնքված պայմանագրով նախատեսված վճարումներն իրականացվում են համաձայն պայմանագրով սահմանված վճարման ժամկետների:

8.7. Եթե պայմանագիրը կնքվելու է ընդհանուր արժեքով, սակայն տվյալ տարում նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է, և ապրանքների մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայությունների մատուցման որոշակի մասը կատարվելու է հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում, պայմանագրում նախատեսվում է, որ հաջորդող տարիներին ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում է համաձայնագիր կնքելու միջոցով: Այն դեպքում, երբ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում չեն նախատեսվում միջոցներ, ապա այդ մասով պայմանագիրը լուծվում է:

8.8. Պայմանագրով Պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, երաշխիքի ձևով: Կանխավճարի մարման կարգը սահմանվում է պայմանագրով:

Գլուխ 9. Գնումների գործընթացին առնչվող փաստաթղթերի պահպանումը

Գնումների գործընթացին առնչվող բոլոր փաստաթղթերը ենթակա են պահպանման Պատվիրատուի կողմից գնումների գործընթացի ավարտից հետո հինգ տարի, եթե դրանց պահպանման այլ ժամկետ նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Գլուխ 10. Գնումների իրականացման ձևերը և դրանց կիրառման պայմանները

10.1. Գնումները կարող են իրականացվել մեկ աղբյուրից (մեկ անձից), գնանշումների հարցման միջոցով կամ մրցույթով:

10.2. Գնումները կարող են իրականացվել մեկ աղբյուրից այն դեպքերում, երբ հիմնադրամը նպատակ ունի ձեռք բերել՝

10.2.1. ապրանքներ, որոնք վերավաճառվելու կամ վարձակալությամբ են տրամադրվելու երրորդ կողմի՝ պայմանով, որ տվյալ կազմակերպությունը չունի նման պայմանագրերի առարկան վաճառելու կամ վարձակալությամբ տրամադրելու հատուկ կամ բացառիկ իրավունք, իսկ այլ կազմակերպություններ կարող են տվյալ կազմակերպության հետ նույն պայմաններով ազատ իրացնել (վաճառել) կամ վարձակալությամբ տրամադրել նմանօրինակ ապրանքներ.

10.2.2. ապրանքներ, ծառայություններ կամ աշխատանքներ՝ երրորդ երկրում համապատասխան գործունեություն իրականացնելու նպատակով և այնպիսի պայմաններով, որոնք չեն ենթադրում Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց շահագործումը.

10.2.3. ապրանքներ, ծառայություններ կամ աշխատանքներ՝ համապատասխան գործունեությունից տարբերվող գործունեություն իրականացնելու համար: Այն դեպքերում, երբ պայմանագիրը ներառում է գործունեության տարբեր տեսակներ, և դրանցից առնվազն մեկը հանդիսանում է համապատասխան գործունեություն, սակայն օբյեկտիվորեն հնարավոր չէ որոշել, թե գործունեության որ տեսակի համար է հիմնականում նախատեսված պայմանագիրը, գնումներն իրականացվում են օրենքի դրույթների համաձայն:

10.2.4. Գնումները կարող են իրականացվել մեկ աղբյուրից նաև հետևյալ դեպքերում՝

- Բնական գազի մատակարարում,
- Էլեկտրաէներգիայի մատակարարում,
- ոռոգման, խմելու, տեխնիկական և արդյունաբերական ջրի մատակարարում,
- իրավասու մարմնի տրամադրած իրավական կարգավորման կամ վարչական նորմի հիմքով որպես գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության միակ մատակարար (կապալառու, կատարող) հանդիսացող անձից տվյալ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերում,
- քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների հեղինակային հսկողություն,
- տպագիր կամ էլեկտրոնային հրատարակումների, զանգվածային լրատվության միջոցների ձեռքբերում՝ բացառությամբ հեռուստառադիոհաղորդումների և թերթերի,
- անշարժ գույքի վարձակալություն,
- հիգիենիկ հակահամաճարակային ծառայություն,
- պատվիրակությունների ընդունման, արտասահմանյան այցելությունների կազմակերպման նպատակով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ բացառությամբ օդային փոխադրումների գործակալներից ավիատոմսերի ձեռքբերման,
- անվճարունակության (սնանկության) գործերի կառավարիչների ծառայություն
- բանկային սպասարկման ծառայություններ,
- փոստային կապի ծառայություն,
- գնման առարկայի ձեռքբերման պայմանագրով նախատեսված դեպքերում գնման առարկան արտադրած կամ վերջինիս միակ ներկայացուցիչ հանդիսացող անձից գնման առարկայի տեխնիկական սպասարկման ծառայությունների՝ ներառյալ սպասարկման համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերում,
- «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից սահմանված պահանջներին և նվազագույն սակագներին համապատասխան ավտոմեքենաների ապահովագրման ծառայությունների ձեռքբերում,
- ավիափոխադրում իրականացնող կազմակերպությունների պաշտոնական կայքերում հրապարակային օֆերտայով առաջարկվող ավիատոմսերի՝ էլեկտրոնային եղանակով ձեռքբերում:

Սույն կետով սահմանված գնումները մեկ աղբյուրից կատարվում են հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով:

10.3. Գնումները կարող են իրականացվել գնանշումների հարցման միջոցով, եթե գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը՝ ապրանքների համար և տասնապատիկը՝ աշխատանքների և ծառայությունների համար:

10.4. Գնումները պետք է իրականացվեն մրցույթով, եթե գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքը գերազանցում է Կարգի 10.3. կետում գնանշումների հարցման միջոցով գնումներ իրականացնելու համար ամրագրված սահմանային արժեքները:

10.5. Կարգով նախատեսված դեպքերում մրցույթը կարող է անցկացվել երկու փուլով:

Մրցույթը կարող է անցկացվել երկու փուլով, եթե պատվիրատուն՝

ա) հնարավորություն չունի սահմանելու գնման առարկայի բնութագրերը, և՝

- հնարավորություն է տալիս մասնակիցներին ներկայացնելու առաջարկներ գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ, կամ՝

- գնման առարկայի բնութագրերի որոշ առանձնահատկությունների հստակեցման նպատակով անհրաժեշտություն է առաջացել բանակցելու մասնակիցների հետ.

բ) մտադիր է կնքել գնման պայմանագիր՝ գիտական, այդ թվում՝ սոցիոլոգիական կամ փորձագիտական հետազոտություններ ձեռք բերելու նպատակով:

10.6. Պատվիրատուի կողմից խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումն իրականացվում է Կարգի 27-րդ գլխով նախատեսված կարգով:

Գլուխ 11. Մրցույթի կամ գնանշումների հարցման արդյունքում հաղթողի ընտրության սկզբունքները

11.1. Մրցույթի կամ գնանշումների հարցման արդյունքում հաղթող ընտրելիս պատվիրատուն կարող է կիրառել.

ա) գնային գնահատման սկզբունքը,

բ) բալային գնահատման սկզբունքը:

11.2. Գնային գնահատման սկզբունքի կիրառման ժամանակ հաղթող է ճանաչվում մրցույթի կամ գնանշումների հրավերի պահանջներին բավարարող հայտ ներկայացրած, որակավորման չափանիշները բավարար գնահատված, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը:

11.3. Բալային գնահատման սկզբունքի կիրառման ժամանակ հաղթող է ճանաչվում մրցույթի կամ գնանշումների հրավերի պահանջներին բավարարող հայտ ներկայացրած այն մասնակիցը, որը ստացել է բալերի առավելագույն քանակը:

Ընդ որում, յուրաքանչյուր չափանիշի մասով լավագույն (ամենաբարձր կամ ամենացածր ցուցանիշ ունեցող) հայտ ներկայացրած մասնակիցը ստանում է տվյալ չափանիշի համար սահմանված բալերի առավելագույն քանակը: Մնացած մասնակիցները գնահատվում են հետևյալ կերպ.

ա) եթե տվյալ չափանիշի մասով լավագույն ցուցանիշ է համարվում ամենաբարձր ցուցանիշը, ապա տվյալ մասնակցին տրվող բալերի քանակը որոշվում է այդ չափանիշի մասով տվյալ մասնակցի ունեցած ցուցանիշի և այդ չափանիշի մասով լավագույն հայտ ներկայացրած մասնակցի ունեցած ցուցանիշի

հարաբերությունը այդ չափանիշի համար սահմանված առավելագույն բալերի թվով բազմապատկելու միջոցով,

բ) եթե տվյալ չափանիշի մասով լավագույն ցուցանիշ է համարվում ամենացածր ցուցանիշը, ապա տվյալ մասնակցին տրվող բալերի քանակը որոշվում է այդ չափանիշի մասով լավագույն հայտ ներկայացրած մասնակցի ունեցած ցուցանիշի և այդ չափանիշի մասով տվյալ մասնակցի ունեցած ցուցանիշի հարաբերությունը այդ չափանիշի համար սահմանված առավելագույն բալերի թվով բազմապատկելու միջոցով,

գ) տվյալ մասնակիցների ստացած բալերի գումարային քանակը որոշվում է բոլոր չափանիշների մասով ստացված բալերի գումարային քանակով:

Բալային գնահատման բոլոր չափանիշների առավելագույն բալերի գումարային քանակը պետք է կազմի հարյուր միավոր:

11.4. Բալային գնահատման չափանիշները կարող են վերաբերել.

ա) հայտի գնին,

բ) հայտի տեխնիկական առաջարկին,

գ) մասնակիցների որակավորման չափանիշներին,

դ) վճարման ժամկետներին և պայմաններին,

ե) մատակարարման ժամկետներին և պայմաններին,

զ) երաշխիքային սպասարկման ժամկետներին և այլն:

11.5. Պատվիրատուն պարտավոր է մրցույթի կամ գնանշումների հրավերում նշել, թե որ սկզբունքով է կատարելու հաղթողի ընտրությունը: Ընդ որում, եթե պատվիրատուն նշում է, որ հաղթողին ընտրելու է բալային գնահատման սկզբունքով, ապա մրցույթի կամ գնանշումների հրավերը պետք է ներառի նաև.

ա) այն չափանիշները, որոնք հանդիսանալու են բալային գնահատման առարկա,

բ) չափանիշներից յուրաքանչյուրին տրվելիք բալերի առավելագույն քանակը:

ԲԱԺԻՆ II. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՄԵԿ ԱՂԲՅՈՒՐԻՑ ԵՎ ԳՆԱՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Գլուխ 12. Գնումների իրականացումը մեկ աղբյուրից

12.1. Պատվիրատուն կարող է մեկ աղբյուրից գնումներ իրականացնել ՀՀ օրենսդրությանը համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների առուվաճառք իրականացնելու իրավունք ունեցող ցանկացած անձից:

12.2. Գնումը կարող է իրականացվել մեկ աղբյուրից, եթե՝

12.2.1. գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.

12.2.2. ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ իրավիճակից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել.

12.2.3. ձեռք են բերվում ապրանքների լրացուցիչ քանակություններ, որոնք նախատեսված են մատակարարի կողմից նախապես մատակարարված

սարքավորումները (կառուցվածքները) փոխարինելու կամ լրացնելու համար, և սկզբնական մատակարարի փոփոխությունը կպարտադրի պատվիրատուին ձեռք բերել այլ հատկանիշներ ունեցող ապրանքներ, ինչը շահագործման ու պահպանման առումով կառաջացնի անհամատեղելիություն կամ անհամաչափ տեխնիկական բարդություններ: Այս պայմանը կարող է կիրառվել միայն սկզբնական պայմանագրի կնքմանը հաջորդող երեք տարվա ընթացքում.

12.2.4. պատվիրատուն, որևէ անձից կատարելով աշխատանքների կամ ծառայությունների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն չնախատեսված հանգամանքներից ելնելով սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած աշխատանքների կամ ծառայությունների լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ՝

ա. լրացուցիչ աշխատանքների կամ ծառայությունների պայմանագիրը հնարավոր չէ տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից՝ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու, և

բ. դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի քսան տոկոսը:

Միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ.

12.2.5. ապրանքները ձեռք են բերվում իր ձեռնարկատիրական գործունեությունը վերջնականորեն դադարեցնող կազմակերպությունից կամ սնանկության գործով լուծարողներից կամ կառավարիչներից, վարկատուների հետ պայմանավորվածության հիման վրա կամ նմանօրինակ ընթացակարգի միջոցով՝ պատվիրատուի համար առանձնակի նպաստավոր պայմաններով.

12.2.6. գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը:

12.3. Եթե հրատապության հիմքով իրականացվող գնման նախահաշվային արժեքը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա շուկայի ուսումնասիրության արդյունքում երկու և ավելի գնային առաջարկի պայմաններով պատվիրատուն գնումն իրականացնում է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցից: Մեկ աղբյուրից գնումներ իրականացվելու դեպքում գնման հրավերը կարող է նախապես չհրապարակվել՝ բացառությամբ Կարգի 12.4. կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքի:

12.4. Մեկ աղբյուրից գնումներ իրականացվելու դեպքում գործում են Կարգով սահմանված պահանջները՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) եթե գնումն իրականացվում է Կարգի 12.2.3., 12.2.4. և 12.2.5. կետերի հիման վրա, ապա՝

ա. մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում, պայմանագրի, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովում ներկայացնում է, եթե գնումը կատարվում է Կարգի 12.2.3. և 12.2.4. կետերի հիման վրա,

բ. մասնակցի հայտը ներառում է գնային առաջարկը, ապրանքների գնման դեպքում՝ ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև Կարգի 3-րդ գլխով նախատեսված որակավորման պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) եթե գնումն իրականացվում է Կարգի 12.2.1. և 12.2.6. կետերի հիման վրա, ապա մասնակիցը՝

ա. հայտի, ինչպես նաև պայմանագրի կամ կանխավճարի ապահովում չի ներկայացնում,

բ. ներկայացնում է միայն գնային առաջարկ.

3) եթե գնումն իրականացվում է Կարգի 12.2.2. կետի հիման վրա, ապա՝

ա. հրավերը գնման հայտում նշված մասնակիցներին ուղարկվում է միաժամանակյա ծանուցմամբ՝ հրավերը նույն օրը հրապարակելով նաև www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում,

բ. հայտերի ներկայացման ժամկետը սահմանվում է ոչ շուտ, քան հրավերն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մեկ աշխատանքային օր:

գ. Մասնակիցների՝ Կարգի 3.1. կետով նախատեսված մասնակցության իրավունքի սահմանափակումը չի կիրառվում, իսկ Կարգի 3-րդ գլխով նախատեսված որակավորումը հրավերով սահմանվում և գնահատվում է՝ հիմք ընդունելով Կարգով սահմանված պահանջները,

դ. մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնման ընթացակարգին կոնսորցիումով մասնակցելու դեպքում՝ համատեղ գործունեության պայմանագիր, գնային առաջարկ, որակավորումը հիմնավորող փաստաթղթեր, ապրանքների գնման դեպքում՝ ապրանքի անվանում և տեխնիկական բնութագրեր, հայտի ապահովում,

ե. մասնակիցը հայտը քարտուղարին (գնումները համակարգողին) է ներկայացնում հրավերով սահմանված կարգով՝ փակ ծրարով,

զ. հայտերի բացումը, գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում են հայտերի բացման նիստում՝ հաշվի առնելով, որ այն հայտերը, որոնք գնահատվել են հրավերի պահանջներին չբավարարող, մերժվում են, իսկ հրավերի պահանջները բավարարող գնահատված, հայտեր ներկայացրած, նիստին ներկա մասնակիցների ներկայացուցիչների հետ կազմակերպվում են ներկայացված գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ, և բանակցությունների ավարտին նվազագույն գին ներկայացրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Ընտրված մասնակցի հետ մեկ աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով կնքվում է պայմանագիր: Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում, պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին,

է. անգործության ժամկետ չի սահմանվում,

ը. պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների դեպքում հրավերը չի հրապարակվում www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում,

թ. ընտրված մասնակիցը ներկայացնում է պայմանագրի (կանխավճարի) ապահովում.

Սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում հայտը քարտուղարին (գնումների համակարգողին) է ներկայացվում հրավերով սահմանված կարգով՝ մասնակցի հաստատած գրությամբ: Հայտը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ քարտուղարին հասցեագրված գրությամբ:

Գլուխ 13. Գնումների իրականացումը գնանշումների հարցման միջոցով

13.1. Գնանշումների հարցման միջոցով գնումներ իրականացնելու դեպքում պատվիրատուն գնանշումների հրավերը և հայտարարությունը պետք է հրապարակի իր կայքէջում, ինչպես նաև gnumner.am կայքում:

Հայտարարությունը պետք է պարունակի.

ա) պատվիրատուի անվանումը, հասցեն և հեռախոսահամարները,

բ) գնման առարկայի անվանումը,

գ) հայտ ներկայացնելու ժամկետը և վայրը, հայտի լեզուն,

դ) այլ անհրաժեշտ տվյալներ և տեղեկատվություն:

Հրավերը պետք է պարունակի՝

ա) պայմանագրի գնի հաշվարկման մեթոդը և արտահայտման ձևը, արժույթը, ինչպես նաև տեղեկատվություն՝ փոխադրման և ապահովագրման ծախսերի, տուրքերի և հարկերի ներառված լինելու կամ չլինելու մասին,

բ) գնանշումների հայտերի ներկայացման և բացման նիստի վայրը և ժամկետները,

գ) պատվիրատուի կողմից գնումների իրականացման կարգը,

դ) պահանջվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը, գնումների իրականացման ժամկետները և պայմանները, ապրանքների քանակը, աշխատանքների ծավալները:

ե) մասնակիցներին առաջադրվող որակավորման չափանիշները և մասնակցության իրավունքը հավաստող փաստաթղթերի կազմը կամ դրանց առաջադրվող պահանջները,

զ) հաղթողի ընտրության սկզբունքը:

Գնանշումների հարցման դեպքում մասնակիցը հայտը ներկայացնում է ընդհանուր կանոններով՝ Կարգին համապատասխան:

13.2. Պատվիրատուն, իր հայեցողությամբ, գնանշումների հարցումը կարող է իրականացնել նաև զանգվածային լրատվամիջոցներում հրավերներ հրապարակելու միջոցով:

13.3. Գնանշումների հայտերի ներկայացման ժամկետը սահմանում է պատվիրատուն, որը չի կարող պակաս լինել հինգ աշխատանքային օրվանից, որի հաշվարկը սկսվում է մասնակիցներին հայտարարությունը և հրավերն ուղարկելու և դրանք gnumner.am կայքում հրապարակելու օրվան հաջորդ աշխատանքային օրվանից:

Հայտարարությունը և հրավերն ուղարկվում են մասնակիցներին միաժամանակ, էլեկտրոնային փոստի միջոցով, կից պայմանագրի նախագծով:

13.4. Գնանշումների հայտերը ներկայացվում են փակ ծրարով, որը ստորագրվում և կնքվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարի վրա նշվում է.

ա) ներկայացման վայրը (հասցեն), օրը, ժամը և գրանցման համարը,

բ) ներկայացնողի անվանումը (անուն, ազգանունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը,

գ) «չբացել մինչև (գնանշումների արդյունքների ամփոփման օրը, ժամը)» բառերը,

դ) գնանշման ծածկագիրը:

13.5. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ներկայացնել գնանշման միայն մեկ հայտ, համաձայն Կարգի 19-րդ գլխի:

13.6. Պատվիրատուն գնանշումների հայտերը գրանցում է առանձին գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության: Գնանշման հայտի փակ ծրարի վրա պատվիրատուն նշում է դրա գրանցման համարը, օրը և ժամը:

13.7. Մասնակիցը կարող է պատվիրատուից պահանջել ստացական՝ հայտն ընդունված լինելու մասին:

13.8. Գնանշումների հայտերի ներկայացման ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում:

13.9. Գնանշումների հայտերը բացվում են գնահատող հանձնաժողովի նիստում՝ գնանշումների հրավերում նշված ժամկետներում: Մասնակիցներն իրավունք ունեն ներկա գտնվել գնանշումների հայտերի բացմանը:

13.10. Գնանշումների հարցման արդյունքների ամփոփման նիստում գնահատող հանձնաժողովը.

ա) հրապարակում է գնանշումների հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անուն, ազգանունները), գնանշումների հայտերի ներկայացման ժամկետները,

բ) բացում է գնանշումների հրավերում սահմանված ժամկետում ներկայացված գնանշումների հայտերը և հրապարակավ ստուգում գնանշումների հրավերում նշված փաստաթղթերի ամբողջականությունը,

գ) հրապարակում է մասնակիցների գնանշումների հայտերի գները,

դ) կայացնում է որոշում՝ գնանշումների հրավերում նշված ոչ բոլոր փաստաթղթերը ներառող գնանշումների հայտերը մերժելու մասին,

ե) գնահատում է մասնակիցների որակավորման չափանիշների և մասնակցության իրավունքը հավաստող փաստաթղթերի համապատասխանությունը գնանշումների հրավերի պահանջներին,

զ) կայացնում է որոշում՝ գնանշումների հրավերում սահմանված որակավորման չափանիշներին չբավարարող և մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների գնանշումների հայտերը մերժելու մասին,

է) գնահատում է մասնակիցների ներկայացրած տեխնիկական առաջարկների համապատասխանությունը գնանշումների հրավերի պահանջներին,

ը) կայացնում է որոշում՝ գնանշումների հրավերում նշված տեխնիկական պահանջներին չբավարարող գնանշումների հայտերը մերժելու մասին,

թ) ստուգում է գնանշումների հայտերի գնային առաջարկներում թվաբանական սխալների առկայությունը, ինչպես նաև բառերով և թվերով գրված գումարների համապատասխանությունը,

ժ) կայացնում է որոշում՝ թվաբանական սխալներ, ինչպես նաև բառերով և թվերով գրված գումարների անհամապատասխանություն պարունակող գնանշումների հայտերը մերժելու մասին,

ժա) կայացնում է որոշում՝ գնանշումների հարցման արդյունքում հաղթող ճանաչելու և նրան պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին, կամ գնանշումների հարցումը հայտարարում չկայացած:

Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

13.11. Գնահատող հանձնաժողովը գնանշումների հարցման արդյունքների ամփոփման նիստում կազմում է արձանագրություն, որը պետք է պարունակի.

ա) Հրավեր ուղարկված անձանց կամ կազմակերպությունների անվանումները /անուն, ազգանուն/, հասցեները և հեռախոսահամարները,

գ) գնանշումների հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անուն, ազգանունները), հասցեները և հեռախոսահամարները,

դ) մերժված գնանշումների հայտերի հիմնավորումները,

ե) հաղթողի անվանումը (անուն, ազգանունը) և գտնվելու վայրը, նրա ընտրության հիմնավորումը, պայմանագրի գինը և/կամ մյուս հիմնական պայմանները,

զ) գնանշումների հարցումը չկայացած հայտարարելու դեպքում՝ դրա հիմնավորումները,

է) գնահատող հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները,

ը) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

13.12. Արձանագրությունը ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին մասնակցած անդամները: Եթե գնահատող հանձնաժողովի նիստին մասնակցած անդամները կամ ներկա մասնակիցները գնանշումների արդյունքների ամփոփման վերաբերյալ ունեն այլ կարծիք (հատուկ կարծիք), ապա այն գրավոր կցվում է արձանագրությանը: Մասնակիցները կարող են պահանջել կազմված արձանագրության պատճենը, որը գնահատող հանձնաժողովը տրամադրում է ոչ ուշ, քան պահանջը ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

13.13. Պատվիրատուն գնանշումների հարցման արդյունքների ամփոփումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, հաղթող ճանաչված մասնակցին էլեկտրոնային եղանակով ներկայացնում է պայմանագիր կնքելու առաջարկ:

Եթե հաղթողը հնգօրյա /աշխատանքային/ ժամկետում չի ներկայանում պայմանագիրը կնքելու համար կամ հրաժարվում է պայմանագիր կնքելու առաջարկից, ապա պատվիրատուն հաղթող է ճանաչում և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնում հաջորդ տեղերը զբաղեցրած մասնակիցներին՝ ըստ հերթականության:

13.14. Գնանշման հարցման ընթացակարգի՝ սույն գլխով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են Կարգի՝ մրցույթով իրականացվող գնումներին առնչվող կետերով:

ԲԱԺԻՆ III. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ

Գլուխ 14. Մրցույթի հայտարարության հրապարակումը

14.1. Մրցույթի հայտարարությունը և հրավերը հրապարակվում են www.gnumner.am կայքէջում և պատվիրատուի կայքէջում: Հայտերի ներկայացման ժամկետի հոսքն սկսվում է մրցույթի հայտարարությունը և հրավերը www.gnumner.am կայքէջում հրապարակվելուն հաջորդող աշխատանքային օրվանից:

Մրցույթների հայտերի բացման օրը սահմանված է Կարգի 22.1 կետում:

14.2. Մրցույթի հայտարարությունը պետք է պարունակի.

ա) պատվիրատուի անվանումը, հասցեն և հեռախոսահամարները,

բ) պահանջվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակը, բնութագրերը, գնումների կատարման ժամկետները և պայմանները,

գ) հաղթողի ընտրության սկզբունքը,

դ) մրցույթի հրավեր ստանալու կարգը,

ե) մրցույթի հայտ ներկայացնելու վայրը և ժամկետը, հայտի լեզուն,

զ) այլ անհրաժեշտ տվյալներ և տեղեկատվություն:

Հայտերի ներկայացման ժամկետը սահմանում է պատվիրատուն, որը չի կարող պակաս լինել 7 աշխատանքային օրվանից, որի հաշվարկը կատարվում է Կարգի 14.1 կետով սահմանված կարգով:

Գլուխ 15. Մրցույթի հրավերի տրամադրումը

15.1. Պատվիրատուն պարտավոր է մրցույթի հայտարարությամբ սահմանված կարգով մրցույթի հրավեր ստանալու ցանկություն հայտնած անձանց տրամադրել մրցույթի հրավեր: Մրցույթի հրավեր ստանալու ցանկություն ունեցող անձը մրցույթի հրավեր ստանալու համար պատվիրատուին վճարում է 3.000 /երեք հազար/ ՀՀ դրամ՝ հրավերը թղթային տարբերակով ստանալու համար, որը վերադարձման ենթակա չէ: Էլեկտրոնային տարբերակով հրավերը մասնակցին տրամադրվում է անվճար:

Եթե պատվիրատուն մրցույթի հայտարարությունը հրապարակել է նաև այլ երկրում շրջանառվող մամուլում, ապա մրցույթի հրավեր ստանալու ցանկություն ունեցող անձանց պահանջով մրցույթի հրավերը պետք է տրամադրվի նաև ռուսերեն կամ անգլերեն լեզվով: Մրցույթի հրավերի թարգմանության հետ կապված ծախսերը կատարվում են մասնակցի կողմից: Ռուսերենով կամ անգլերենով հրավեր տրամադրելու համար գանձվող գումարի չափը սահմանվում է գնումների հայտարարությամբ, որը չի կարող գերազանցել հրավերի թարգմանության, տպագրման և առաքման համար կատարվող ծախսերի չափը: Այդ դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի տրամադրումն այդպիսի պահանջ ստանալու և սույն կետում նշված վճարն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Պատվիրատուի կողմից ռուսերենով կամ անգլերենով տրամադրված հրավերն ունի նույն իրավական ուժը, ինչ որ հայերեն հրավերը: Ռուսերենով կամ անգլերենով հրավերի և հայերեն հրավերի տարբերության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Գլուխ 16. Մրցույթի հրավերի բովանդակությունը

16.1. Մրցույթի հրավերը պետք է պարունակի.

ա) պահանջվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը, գնումների իրականացման ժամկետները և պայմանները, ապրանքների քանակը, աշխատանքների ծավալները:

բ) մասնակիցներին առաջադրվող որակավորման չափանիշները և մասնակցության իրավունքը հավաստող փաստաթղթերի կազմը կամ դրանց առաջադրվող պահանջները,

գ) հաղթողի ընտրության սկզբունքը,

դ) պայմանագրի գնի հաշվարկման մեթոդը և արտահայտման ձևը, արժույթը, ինչպես նաև տեղեկատվություն՝ փոխադրման և ապահովագրման ծախսերի, տուրքերի և հարկերի ներառված լինելու կամ չլինելու մասին,

ե) մրցույթի հայտ ներկայացնելու վայրը և ժամկետը, հայտի լեզուն,

զ) մրցույթի հայտերը բացելու օրը, ժամը և տեղը,

է) կնքվելիք պայմանագրի նախագիծը,

ը) պատվիրատուի կողմից գնումների իրականացման կարգը,

թ) այլ անհրաժեշտ տվյալներ և տեղեկատվություն:

16.2. Հրավերով նախատեսվում է, որ՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. գնումներին մասնակցելու իր իրավունքը, այդ թվում՝ Կարգի 3.1-րդ կետով նախատեսված՝ գնումներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցանկում ընդգրկված չլինելը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է հրավերով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

գ. գնային առաջարկ,

դ. հայտի ապահովում,

ե. հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը,

զ. առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը:

2) կնքվելիք պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը: Եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության կամ ենթակապալի միջոցով, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները.

3) մասնակիցը կարող է գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

ա. հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը,

բ. հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի 16.2 կետի 1-ին ենթակետով նախատեսված, պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

Գլուխ 17. Պարզաբանումների տրամադրումը

Մրցույթի հայտերի ընդունման ժամկետից ոչ պակաս, քան երկու աշխատանքային օր առաջ, մասնակիցը կարող է պահանջել մրցույթի հրավերի պարզաբանում: Պատվիրատուն պարզաբանումն ուղարկում է բոլոր մասնակիցներին՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում: Պատվիրատուն պարզաբանումը չի տրամադրում, եթե հարցումը կատարվել է Կարգով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև այն դեպքում, երբ հարցումը չի վերաբերում մրցույթի հրավերի բովանդակությանը՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնելով հարցում կատարած

մասնակցին: Մրցույթի հրավերի պարզաբանման հետ կապված բոլոր հարցերը և պատասխանները կատարվում են գրավոր:

Գլուխ 18. Մրցույթի հայտի բովանդակությունը

18.1. Մրցույթի հայտը պետք է պարունակի.

ա) մրցույթի հայտի ապահովումը,

բ) մասնակցի տեխնիկական առաջարկը,

գ) մասնակցի որակավորման չափանիշները և մրցույթին նրա մասնակցության իրավունքը հավաստող փաստաթղթերը,

դ) ապրանքների մատակարարման, աշխատանքների և ծառայությունների իրականացման ժամկետները և վճարման պայմանները,

ե) մասնակցի գնային առաջարկը,

զ) մրցույթի հրավերում նշված այլ փաստաթղթեր:

18.2. Մրցույթի հայտը պետք է տպագրվի կամ գրվի չջնջվող թանաքով, և նրա բոլոր էջերը պետք է ստորագրվեն մասնակցի կամ նրա կողմից լիազորված անձի (անձանց) կողմից:

18.3. Մրցույթի հայտի բոլոր փաստաթղթերը դրվում են փակ ծրարի մեջ, որը ստորագրվում և կնքվում է այն ներկայացնողի կողմից:

Մասնակիցը մրցույթի հայտի ծրարի վրա նշում է.

ա) մրցույթի հայտի ներկայացման վայրը (հասցեն),

բ) մասնակցի անվանումը (անուն, ազգանունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը,

գ) «չբացել մինչև (մրցույթի անցկացման օրը, ժամը)» բառերը,

դ) գնման ընթացակարգի ծածկագիրը:

18.4. Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում՝ մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման,

18.5. Պատվիրատուն իրավունք ունի հրավերով պահանջել հայտ ներկայացնող մասնակիցներից հայտը և գնային առաջարկը ներկայացնել ինչպես գնման առարկայի ընդհանուր քանակի ամբողջական արժեքով, այնպես էլ՝ գնման առարկայի յուրաքանչյուր մեկ միավորի արժեքը նշելով:

18.6. Մասնակիցների կողմից որպես գնման առարկային համարժեք ապրանք առաջարկվելու դեպքում մասնակիցները հայտով ներկայացնում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների տեխնիկական մանրամասն բնութագրերը, որոնք հանձնաժողովի կողմից ենթակա են պարտադիր գնահատման: Գնման առարկային համարժեք ապրանք առաջարկած մասնակիցը հաղթող ճանաչվելու դեպքում վերջինիս հետ կնքվելիք պայմանագրում պետք է արտացոլվեն նշված բնութագրերը:

Գլուխ 19. Մրցույթի հայտերի ներկայացումը

19.1. Մրցույթին մասնակցելու մտադրություն ունեցող անձինք, մրցույթի հրավերում նշված ժամկետներում, պատվիրատուին ներկայացնում են մրցույթի հայտ: Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ներկայացնել միայն մեկ հայտ:

19.2. Պատվիրատուն մրցույթի հայտերը գրանցում է առանձին գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության: Մրցույթի հայտի փակ ծրարի վրա պատվիրատուն նշում է դրա գրանցման համարը, օրը և ժամը:

19.3. Մասնակիցը կարող է պատվիրատուից պահանջել ստացական՝ հայտն ընդունված լինելու մասին:

19.4. Մրցույթի հայտերի ներկայացման ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվում:

Գլուխ 20. Մրցույթի հայտի գործողության ժամկետը, հայտը հետ վերցնելը, հայտից հրաժարվելը և դրանում փոփոխություն կատարելը

20.1. Մրցույթի հայտը վավեր է համարվում մինչև Կարգին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից մրցույթի հայտը հետ վերցնելը կամ հայտից հրաժարվելը, մրցույթի հայտի մերժումը, մրցույթը չկայացած հայտարարվելը:

20.2. Մրցույթի մասնակիցը, մինչև մրցույթի հայտեր ներկայացնելու ժամկետի ավարտը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել այն: Եթե մրցույթի մասնակիցը փոփոխում է իր կողմից ներկայացված հայտը, ապա ծրարի վրա պետք է ավելացնի «փոփոխում» բառը:

20.3. Մրցույթի հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո մրցույթի հայտերը փոփոխման ենթակա չեն: Մրցույթի հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո հայտից հրաժարվելու դեպքում պատվիրատուն մրցույթի հայտի ապահովումը չի վերադարձնում:

Գլուխ 21. Մրցույթի հայտի ապահովումը

21.1. Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

21.2. Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

21.3. Մասնակիցը հայտի ապահովում ներկայացնում է նաև գնանշումների հարցման և հրատապության հիմքով պայմանավորված գնումների իրականացման դեպքում՝ Կարգի 21.1 կետով սահմանված չափով և կարգով:

Գլուխ 22. Մրցույթի հայտերի բացումը

22.1. Մրցույթի հայտերը բացվում են դրանց ներկայացման ժամկետն ավարտվելու օրը՝ գնահատող հանձնաժողովի նիստում: Մասնակիցները կարող են ներկա գտնվել մրցույթի հայտերի բացմանը:

22.2. Մրցույթի հայտերի բացման ընթացքում գնահատող հանձնաժողովը.

ա) հրապարակում է մրցույթի հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները, մրցույթի հայտերի ներկայացման ժամկետները,

բ) բացում է մրցույթի հրավերում սահմանված ժամկետում ներկայացված մրցույթի հայտերը և հրապարակավ ստուգում մրցույթի հրավերում նշված փաստաթղթերի ամբողջականությունը,

դ) բացում է մասնակիցների գնային առաջարկները և հրապարակում մրցույթի հայտերի գները,

ե) ստուգում է գնային առաջարկներում թվաբանական սխալների առկայությունը, ինչպես նաև բառերով և թվերով գրված գումարների համապատասխանությունը,

զ) կայացնում է որոշում՝ թվաբանական սխալներ, ինչպես նաև բառերով և թվերով գրված գումարների անհամապատասխանություն պարունակող գնանշումների հայտերը մերժելու մասին,

Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

է) կայացնում է որոշում՝ մրցույթի արդյունքների ամփոփման վայրի և ժամկետների մասին.

ը) կազմում է մրցույթի հայտերի բացման ընթացքի վերաբերյալ արձանագրություն՝ դրանում նշելով հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները, հայտերի ներկայացման ժամկետները, այն մասնակիցների անվանումները (անուն, ազգանունները), որոնց հայտերը մերժվել են, ինչպես նաև այն մասնակիցների անվանումները (անուն, ազգանունները), որոնց հայտերը դիտարկվելու են հետագա ստուգումների և գնահատումների փուլերում, գնահատող հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և այլ անհրաժեշտ տվյալներ:

22.3. Եթե գնահատող հանձնաժողովի անդամները կամ նիստին ներկա մասնակիցները ունեն կազմված արձանագրության մեջ չներառված այլ կարծիք (հատուկ կարծիք), ապա այն գրավոր կցվում է արձանագրությանը:

22.4. Մասնակիցները կարող են պահանջել արձանագրության պատճեն, որը գնահատող հանձնաժողովը տրամադրում է ոչ ուշ, քան նման պահանջը ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

22.5. Գնումների հանձնաժողովը մրցույթի արդյունքների ամփոփման վայրի և ժամկետների մասին գրավոր տեղեկացնում է մրցույթի հայտերի բացման ընթացքին բացակայող այն մասնակիցներին, որոնց մրցույթի հայտերը վավեր են:

Գլուխ 23. Մրցույթի հայտերի ստուգումը, գնահատումը և ամփոփումը

23. 1. Գնահատող հանձնաժողովը արդյունքների ամփոփման նիստում կազմում է արձանագրություն, որով.

ա) կայացնում է որոշում՝ հրավերում նշված ոչ բոլոր փաստաթղթերը ներառող հայտերը մերժելու մասին,

բ) գնահատում է մասնակիցների որակավորման չափանիշների և մասնակցության իրավունքը հավաստող փաստաթղթերի համապատասխանությունը հրավերի պահանջներին,

գ) կայացնում է որոշում՝ հրավերում սահմանված որակավորման չափանիշներին չբավարարող և մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների հայտերը մերժելու մասին,

դ) գնահատում է մասնակիցների ներկայացրած տեխնիկական առաջարկները

ե) հիմնավորում է հայտերի մերժումը,

զ) կայացնում է որոշում՝ հաղթող ճանաչելու և նրան պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին:

է)հրապարակում է հաղթողի անվանումը, նրա ընտրության հիմնավորումը

ը) մրցույթը չկայացած հայտարարելու դեպքում՝ բերում է դրա հիմնավորումները,

թ) տալիս է այլ անհրաժեշտ տեղեկություններ:

23.2. Արձանագրությունը ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին մասնակցած անդամները: Եթե գնահատող հանձնաժողովի նիստին մասնակցած անդամները կամ ներկա մասնակիցները արդյունքների ամփոփման վերաբերյալ ունեն այլ կարծիք (հատուկ կարծիք), ապա այն գրավոր կցվում է արձանագրությանը: Մասնակիցները կարող են պահանջել կազմված արձանագրության պատճենը, որը գնահատող հանձնաժողովը տրամադրում է ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

23.3. Պատվիրատուն մրցույթի արդյունքների ամփոփումից հետո հաղթող ճանաչված մասնակցին էլեկտրոնային եղանակով ներկայացնում է պայմանագիր կնքելու առաջարկ:

Մինչև պայմանագիր կնքելը, պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայտարարվել՝

1) արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր մասնակիցները.

2) էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով՝ պատվիրված նամակով, գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին ուղարկելու միջոցով.

3) լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև պատվիրատուի ինտերնետային կայքում հայտարարությունը տեղադրելու միջոցով:

Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն՝ անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում առնվազն 10 օրացուցային օր է, իսկ չգերազանցող գնումների դեպքում՝ առնվազն 5 օրացուցային օր:

Նախորդ պարբերությամբ նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե՝

1) օրենքով չի պահանջվում պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակում.

2) միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե Կարգով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

Մրցույթի և գնանշման հարցման ձևով գնման հետ կապված կողմերի՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով:

23.4. Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

23.5. Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) տվյալ մասնակցի հայտը մերժվում է.

2) մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

23.6. Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան նախորդ կետում նշված ծանուցումը բոլոր մասնակիցներին ուղարկվելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, պայմանագիր չի կնքվում, և գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած: Նման դեպքում, ինչպես նաև Կարգի 29.1 կետով նախատեսված դեպքերում, Պատվիրատուն իրավունք ունի կատարել պահանջվող գնման առարկայի քանակի քսան %-ի չափով գնում, եթե պահանջվող գնման առարկան Պատվիրատուին անհրաժեշտ է սեղմ ժամկետներում:

Գլուխ 24. Պայմանագիր կնքելու առաջարկը, պայմանագրի կատարման ապահովումը և պայմանագրի կնքումը

24.1. Պատվիրատուն, մրցույթի արդյունքների ամփոփումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին ներկայացնում է պայմանագրի կատարման ապահովում տրամադրելու և պայմանագիր կնքելու առաջարկ էլեկտրոնային եղանակով:

24.2. Պայմանագրի կատարման ապահովման չափը սահմանվում է մրցույթի հրավերով, որը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի հինգ տոկոսից և չի կարող գերազանցել պայմանագրի գնի տասը տոկոսը:

24.3. Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Պատվիրատուի կողմից մասնակցին պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու պահանջ առաջադրելուն և մասնակցի կողմից պայմանագրի կատարման ապահովումը ներկայացնելուն վերաբերող դրույթները գործում են նաև

գնանշման հարցման և հրատապությամբ պայմանավորված գնումների կատարման դեպքում՝ Կարգով սահմանված ձևով, չափով և գնանշման հարցման միջոցով գնումների մասով՝ նաև Կարգով սահմանված ժամկետներով:

24.4. Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

24.5. Եթե հաղթողը պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու մասին առաջարկ ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և/կամ չի ներկայացնում պայմանագրի կատարման ապահովում, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Այդ դեպքում պատվիրատուն հաղթող է ճանաչում և երեք աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացնում մրցույթում երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցին: Եթե նա ևս պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու մասին առաջարկ ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և/կամ չի ներկայացնում պայմանագրի կատարման ապահովում, ապա ևս զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Պատվիրատուն սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված սկզբունքով հաղթող է ճանաչում և պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացնում նաև մրցույթում հաջորդ տեղերը զբաղեցրած մասնակիցներին՝ ըստ հերթականության:

Հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցների) կողմից հինգ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրն ստորագրելուց հրաժարվելու և/կամ պայմանագրի կատարման ապահովում չներկայացնելու դեպքում պատվիրատուի կողմից մրցույթի հայտի ապահովումը չի վերադարձվում:

24.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու դեպքում պայմանագրի կատարման ապահովումը պայմանագրի գործողության ավարտից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում է այն ներկայացրած մասնակցին:

Գնման գործընթացի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ պայմանագիր կնքելուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հաղթող ճանաչված մասնակցի և պայմանագրի կնքման մասին հայտարարությունը հրապարակում է գնումների էլեկտրոնային տեղեկագրում, ինչպես նաև ուղարկում է հայտ ներկայացրած մասնակիցներին էլեկտրոնային եղանակով:

24.7. Պայմանագրով (նախագծով) սահմանվում է, որ՝

24.7.1. պայմանագրի կողմը պատասխանատվություն է կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

24.7.2. պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխման դեպքում պայմանագրի կողմը գրավոր տեղեկացնում է պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

24.7.3. համատեղ գործունեության (կոնսորցիում) դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները.

24.7.4. պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ, իսկ պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր.

24.7.5. գնումների դիմաց վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պատվիրատուն պարտավոր է ապահովել պայմանագրի կողմի նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ.

24.7.6. եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները.

24.7.7. նախագծային փաստաթղթեր չպահանջող շինարարական ծրագրերի կամ հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից աշխատանքը կամ ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա պայմանագրի կողմը պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները.

24.7.8. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով.

24.7.9. պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ

ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունը պետք է ձեռք բերվի նախքան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

24.7.10. նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

ա. նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմում են օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ. ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ. ներկայացնում է շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

դ. պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

ե. ներկայացնում է ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը.

24.7.11 շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին.

24.7.12. շինարարական ծրագրի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրով նախատեսվում են կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները և սահմանվում է, որ եթե այդ ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով.

24.7.13. պայմանագրի կատարման ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին.

24.7.14. եթե պատվիրատուն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում,

պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը.

24.8. Պատվիրատուն կարող է պայմանագրի ժամկետը երկարաձգել միայն մեկ անգամ՝ մինչև 30 /երեսուն/ օրացուցային օր ժամկետով: Ընդ որում, ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

Գլուխ 25. Հայտերի գնահատման չափանիշները

Հայտերի գնահատման չափանիշները և դրանց գնահատման կարգը սահմանվում են մրցույթի հրավերով, որը ներառում է նաև կնքվելիք գնման պայմանագրի նախագիծը:

Գլուխ 26. Մրցույթում ընտրված խորհրդատուի որոշման կարգը

26.1. Ընտրված խորհրդատուն որոշվում է ներկայացված հայտերից՝ հրավերով նախատեսված՝

ա) ոչ գնային պայմաններով առավել բարձր գնահատված, կամ՝

բ) ոչ գնային նվազագույն պայմաններին համապատասխանող գնահատված և ամենացածր գին առաջարկած, կամ՝

գ) առավելագույն գնի սահմաններում ոչ գնային պայմաններով առավել բարձր գնահատված առաջարկին գերակայություն տալու կարգով:

26.2. Ընտրված խորհրդատուն կարող է որոշվել նաև այն խորհրդատուին գերակայություն տալու կարգով, որի առաջարկած գինը և աշխատանքային փորձը, աշխատակազմը, ծառայության մատուցման առաջարկվող կարգը և (կամ) մրցույթի հրավերով սահմանված ոչ գնային այլ պայմանի (պայմանների) մրցույթի հրավերով սահմանված կարգով տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է:

26.3. Խորհրդատուի ընտրության կարգը սահմանվում է մրցույթի հրավերով, և գնման ընթացակարգի արձանագրության մեջ արտացոլվում են այն հիմքերը, որոնցից ելնելով կիրառվել է տվյալ կարգը:

Գլուխ 27. Խորհրդատվական ծառայությունների գնման առանձնահատկությունները

27.1. Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումն իրականացվում է մրցույթով՝ Կարգով նախատեսված կերպով, եթե սույն գլխով այլ բան նախատեսված չէ:

27.2. Խորհրդատվական ծառայության՝ մրցույթով գնման նպատակով անցկացվում է խորհրդատուների նախարակավորման ընթացակարգ: Գնման գործընթացին հետագա մասնակցության իրավունք են ստանում նախարակավորումն անցած՝ առավել բարձր գնահատական ստացած մինչև վեց մասնակիցներ:

27.3. Հայտերի գնահատման չափանիշները և դրանց գնահատման կարգը սահմանվում են մրցույթի հրավերով, որը ներառում է նաև կնքվելիք գնման պայմանագրի նախագիծը:

ԲԱԺԻՆ IV. ԵՐԿՈՒ ՓՈՒԼՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Գլուխ 28. Երկու փուլով մրցույթի անցկացման կարգը

28.1. Երկու փուլով մրցույթ անցկացնելու դեպքում այդ մասին նշվում է մրցույթի հայտարարության մեջ:

28.2. Երկու փուլով մրցույթի ընթացակարգի նկատմամբ կիրառվում են Կարգի՝ մրցույթի կազմակերպմանն ու անցկացմանը վերաբերող դրույթները, եթե սույն գլխով այլ բան նախատեսված չէ:

28.3. Երկու փուլով մրցույթի առաջին փուլում մասնակիցները, Կարգին համապատասխան, ներկայացնում են մրցույթի սկզբնական հայտեր, որոնք չպետք է ներառեն գնային առաջարկին վերաբերող պայմաններ: Առաջին փուլում գնահատվում են ներկայացված սկզբնական հայտերը, և դրա շրջանակներում կարող են բանակցություններ վարվել բոլոր մասնակիցների հետ: Բանակցություններ վարելու մասին գրավոր ծանուցվում են մրցույթի հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցները:

28.4. Երկրորդ փուլում առաջին փուլն անցած մասնակիցներին տրամադրվում է երկրորդ փուլին մասնակցելու հրավեր և առաջարկվում ներկայացնել մրցույթի վերջնական հայտեր, ներառյալ՝ գնի առաջարկը:

28.5. Երկրորդ փուլի հրավերում կարող են փոխվել մրցույթի առաջին փուլի հրավերով սահմանված պայմանները, որոնց մասին նշվում է երկրորդ փուլի հրավերում: Մրցույթի վերջնական հայտերը գնահատելու և համեմատելու ժամանակ բանակցություններն արգելվում են:

28.6. Երկու փուլով մրցույթի դեպքում մրցույթի հայտի ապահովումը ներկայացվում է երկրորդ փուլում՝ մրցույթի վերջնական հայտով:

28.7. Մրցույթի առաջին փուլն անցած մասնակիցն իրավունք ունի հրաժարվելու երկրորդ փուլին մասնակցելուց:

ԲԱԺԻՆ V. ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱՄ ԳՆԱՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

Գլուխ 29. Մրցույթը կամ գնանշումների հարցումը չկայացած հայտարարելու դեպքերը

29.1. Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

29.2. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

29.3. Տեղեկագրում հրապարակելու նպատակով, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում, պատվիրատուն լիազորված մարմին է ներկայացնում հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը: Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների դեպքում հայտարարությունը չի հրապարակվում:

ԲԱԺԻՆ VI. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՅԼ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Գլուխ 30. Գնումների իրականացման այլ սկզբունքները և գործընթացը

30.1. Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Արհեստական են համարվում հետևյալ դրույթները՝

1) պայմանագրի գնի անփոփոխ մնալու պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների նվազեցումը կամ պայմանագրի գնի նվազեցման պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների ոչ համամասնորեն նվազեցումը, որի արդյունքում ավելանում է գնման առարկայի միավորի ձեռքբերման գինը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ծավալների ավելացումը, որը գերազանցում է պայմանագրի գնի 20 տոկոսը: Պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների ծավալները կարող են ավելանալ միայն պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետում.

3) պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների փոխարինումն այլ բնութագրեր ունեցող ապրանքներով, աշխատանքներով կամ ծառայություններով, որոնք միասին գումարային արտահայտությամբ գերազանցում են պայմանագրի գնի տասնհինգ տոկոսը: Պայմանագրի գնի տասնհինգ տոկոսի շրջանակում փոխարինումը կարող է կատարվել, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունն այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է պայմանագրի արդյունավետ իրականացմանը.

4) Հրատապության հիմքով կնքված պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ժամկետի երկարաձգումը.

5) պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի անփոփոխ մնալու պայմաններում պայմանագրի գնի ավելացումը:

30.2. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

30.3. Գնման առարկայի և պայմանագրի արժեքը քսան միլիոն ՀՀ դրամը գերազանցելու դեպքում պատվիրատուն այդ ամենը պետք է համաձայնեցնի իր հոգաբարձուների խորհրդի հետ: Ընդ որում, նշված կարգը չի տարածվում և չի գործում պատվիրատուի մասնաճյուղերի կողմից իրականացվող գնումների վրա:

30.4. Սույն կարգով չնախատեսված և չկարգավորվող բոլոր իրավահարաբերությունները և պայմանները կարգավորվում են գնումների անցկացման հրավերով, իսկ այդպիսիք նախատեսված չլինելու դեպքում՝ գնումների ոլորտում գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան: